Սրբազնութեան խնդրեմ ամենախոնարհաբար ընդունել իբրեւ ճիշտ տեղեկութիւն։

Միշտ պատրաստական խոնարհագոյն ծառայ և որդի

Ձերդ Ս. Հայրութեան

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԱՒՇԱՐԵԱՆՑ։

18 $\frac{2}{4}$ 88 թ.

ի քաղ. Ղուբայ

Քանի նշանաւոր գիւղօրայք Շամախւոյ թեմի, որք ունին դպրոցներ։

ՔԻԼՎԱՐ

Թէեւ չէի կամենում Շամախւոյ թեմի գիւղերը ստորագրել, տեսնելով որ մի նշանաւոր բան չկայ գրելու բացի սովորական միանման եկեղեցիքն և ժողովրդական սովորութիւնքն սակայն հարկը ստիպեց մի միայն այն գիւղերը մէջ բերել, որ բազմամարդութեամբ նշանաւոր են և մանաւանդ դպրոցներ ունենալովն, և բարբառոյ այլայլութեամբն, որպէս Ղուբայու գաւառումն եղած Քիլվար և Խաչմաս գիւղերը, որոց հայ բնակիչները խօսում են, ինչպէս իրենք են ասում, Թաթի լեզու, որպէս և Շամախու գաւառում Մադրասեցիք. և այս լեզուն և բարբառը խառն է հրէական և Փարսական լեզուներից, այնպէս՝ որ եթէ հրէայ կամ Փարսը խօսեն, Մադրասեցիք և Քիլվարեցիք կը հասկանան նոցա խօսակցութիւնը։ Այդ երեք գիւղացւոց ինչպէս լեզուները օտար է հայերէնից, նոյնպէս էլ ամեն սովորութիւններն և կենցաղավարութեան ձեւն ու եղանակը՝ և մինչեւ անգամ զէմքերն և կերպարանքներն եւս - որ կարծել են տալի տեսնողին, թէ սոքա անշուշտ մեացորդներն են, Աղուանից ազգի։

Մնում է որ՝ դպրոցները հայացնեն խեղճ Մատրասեցւոց, Քիլվարեցւոց և Խաչմասեցւոց, որոց քանի տարի է օգնում է Բագուայ հայոց Մարդասիրական Ընկերութիւնը տարեկան Քիլվարին 300 ռուբլի և Խաչմասին 150 ռուբլի շնորհելով։ Ինչպէս Քիլվար գիւղը նոյնպէս և Խաչմասը գտնում են թանձ-